Ն. ՄԱՌԻ ՄԱՀՎԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Դեկտեմբերի 22-ին և 23-ին կայացավ Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի Մառի անվան կաբինետի կազմակերպած գիտական սեսիան, նվիրված Ն. Մառի մահվան 10-րդ տարեդարձին: Սեսիայում լսվեցին 4 զեկուցում:

Առաջին նիստում «Ն. Մառի գիտական ժառանգությունը անմահ է» թեմայի մասին զեկուցեց ակադեմիկոս Գ. Ղափանցյանը: Նա իր բովանդակալից զեկուցումով բնորոշեց Մառի բազմաբեղուն գիտական գործունեությունը, համարելով նրան «Սփինքս հսկա», որը ոչ միայն կարողացավ իր հետազոտական տեսադաշտով ընդգրկել ողջ հայագիտությունն ու վրացագիտությունը իրենց բոլոր կողմերով, այլև ձեռնարկելով նորանոր լեզուների ուսումնասիրությանը, դուրս եկավ լեզուների ֆոնետիկական դասակարգման նախալեզվյան ուղիների կոնցեպցիայից, առաջարկելով լեզուների համընդհանուրը՝ իրենց արմատներով և ձևական հանգամանքներով, որոնք զարգանում ու փոփոխվում են մարդկային ստադիալ մտածողության համընթաց: Մառը արմատական քննադատության ենթարկելով հնդեվրոպական լեզվաբանությունը, ստեղծեց լեզվի մասին նոր ուսմունք, որը մի հսկայական թռիչք էր լեզվաբանության զարգացման, մատերիալիստական լեզվամտածողության բնագավառում: Մառը, սակայն, ոչ միայն խոշոր գիտնական էր,— եզրափակում է իր խոսքը ակադեմիկոս Գ. Ղափանցյանը,— այլև մեծ քաղաքացի, վառ հայրենասեր, որը գտնում էր, թե ով անկարեկից է դեպի իր երկրի բախտը, չի կարող և խորն ընկալել ավելի վերացական ու բարդ զգացումներ դեպի Հայրենի հնություններն ու զրույցները, ընդհանրապես անընդունակ է սիրելու հումանիտար զբաղմունքները:

«Մառի մտքերը հայ ժողովրդական բանահյուսության մասին» զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ա. Ղանալանյանը, որը ասաց, թե Ն. Մառի բազմահարուստ ժառանգության մեջ նկատելի տեղ են գրավում հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության վերաբերյալ մտքերը: Դեպի Հայաստանի պատմական ճակատագիրն ունեցած իր անկաշառ հետաքրքրությամբ, հայկական հնությունների ու զրույցների նկատմամբ տածած մեծ սիրո և իր յուրահատուկ էրուդիցիայի շնորհիվ, մեծ գիտնականը հայ ժողովրդի նյութական և հոգևոր կուլտուրայի մյուս չքնաղագույն հուշարձանների հետ, կարողացել է ըստ արժանվույն գնահատել նաև հայկական հարուստ բանահյուսությունը, իր արժեքավոր լուման մտցնելով վերջինիս ուսումնասիրության գործի մեջ. Իր զեկուցման մեջ ընկ. Ա. Ղանալանյանը հանգամանորեն վերլուծեց հայոց ավանդական բանահյուսության մասին անվանի հայագետի հայտնած առավել ուշագրավ և ինքնատիպ մտքերը, հաստատելով դրանց կարևորությունը հայ բանագիտության համար:

Նա առանձնապես կանգ առավ իրենց նախնիներից հայերի ստացած ֆոլկլորային ժառանգության, Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանների հետ հայկական բանահյուսության ունեցած սերտ կապի, այդ բանահյուսության և ուրիշ ժողովուրդների ֆոլկլորի կապի (կրած և թողած ազդեցության), հայկական զրույցների ու երգերի, հայ ժողովրդի ինքնության և ինքնուրույնության պահպանման գործում ունեցած մեծ դերի և նման մի շարք այլ հարցերի մասին Մառի հայտնած կարծիքների վրա: Զեկուցողը նշեց, որ այդ կարծիքները կարևոր ազդակ կարող են դառնալ գիտական որոնումների, ստեղծագործական հղացումների և տեսական ընդհանրացումների համար: Դրանց հետագա խորացումն ու ընդլայնումը հնարավորություն կտա լուծելու հայ ժողովրդի բազմադարյան բանահյուսության չուսումնասիրված և կամ թերի ու սխալ մեկնաբանված մի շարք հարցեր:

Սեսիայի երկրորդ նիստում, դեկտեմբերի 23-ին, զեկուցեցին ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ ընկ. Ս. Ղազարյանը՝ «Գրաբարի կազմավորումը ըստ Մառի» և ընկ. Ա. Մուրվալյանը՝ «Հայերենի բայածանցները» թեմաների շուրջը:

Ընկ. Ղազարյանը, ղեկավարվելով գրաբարի մասին Ն. Մառի արտահայտած կարծիքներով, ուսումնասիրել է հին հայոց լեզուն իր ստադիալ զարգացման ու ձևավորման տեսանկյունից: Գրաբար լեզուն,— ասաց նա,— ձևավորվել ու խոսվածքային նախնական աստիճանից վեր է բարձրացել ավելի ուշ շրջանում, երբ Հայաստանում ստեղծված էր ուժեղ պետականություն: Այնուհետև վերլուծելով գրաբարում պահպանված և նախաքրիստոնեական շրջանից դեռևս շատ առաջ իշխող իդեոլոգիայի հետ կապված լեզվական մի շարք հնագույն իրողություններ ու մեր թվականությունից առաջ օտար աղբյուրներում հայերի և հայերենի մասին եղած հիշատակությունները, նա եզրակացնում է, որ հին հայերենը՝ գրաբարը, որպես զարգացած ու պաշտոնական լեզու, հիմնականում կազմավորվել է մեր էրայից առաջ, իր վերջնական ձևավորումն է ստացել Տիգրան 2-րդի տիրակալության շրջանում: Այսպիսով,— ավելացնում է նա,— հաստատվում են ակադեմիկոս Մառի կարծիքները հայոց լեզվի մասին, ըստ որոնց գրաբարը իր գոյացման սկզբնական շրջանում շատ մոտ է եղել ժողովրդական լեզուներին, բայց հետագայում մշակվելով ինտելիգենցիայի կողմից և զարգացած ու կուլտուրական լեզվի աստիճանի հասնելով, այնքան է հեռանում բարբառներից, որ 5-րդ դարում արդեն ընդհանուր խոսակցական լեզու չէր, թեև հասկանալի էր հայ ժողովրդի բոլոր հատվածներին:

Իր ուսումնասիրությամբ հաստատելով հայոց լեզվի մասին Մառի կարծիքները, զեկուցողը բացահայտում է նաև հայերենի առթիվ հնդեվրոպական լեզվաբանության մշակած թեորիաների հակագիտականությունն ու հակաշխատավորականությունը:

Ընկ. Ա. Մուրվալյանը հենվելով քարթվելական-հայկական ազգակից լեզվատարրերի հարուստ նյութի վրա, հետազոտում է հայերենի բայածանցները, պարզում այն ընդհանուր թելերը, որոնցով բայածանցները անմիջականորեն կապվում են գոյական անունների հոգնակի մասնիկների հետ և համընկնում են նրանց հետագա ձևա-իմաստային այլակերպումներ: Բայածանցների արտահայտած սկզբնական հավաքական կամ շատի գաղափարը,— ասում է ընկ. Մուրվալյանը,— մինչև օրս էլ, այս կամ այն չափով պահպանված է հայոց մի շարք բայածանցներում: Լեզվական այդ վերապրուկները գերազանցապես կապված են ժողովրդական մտածողության և ժողովրդական լեզուների հետ: Այնուհետև նա ցույց է տալիս, որ անունների հոգնակի մասնիկները բայերին անցնելու երևույթը հատուկ չէ միայն հայերենին, նման երևույթ կա նաև հարևան ժողովուրդների լեզուներում (վրացերենում, սվաներենում և այլն), այսպիսով պարզվում է, որ հայերենը յուր ձևաբանական որոշ պայմաններով նույնպես կապվում է հաբեթական լեզուների հետ: Այդ փաստերը ապացուցում են Մառի այն կարծիքը, ըստ որի հայերենը ինչպես իր բառապաշարով, նույնպես և՛ ձևաբանությամբ ու շարահյուսությամբ հիմնականում ձևավորվել է հայկական բարձրավանդակում հայերից առաջ ապրած և ապա հայացած բնիկ ժողովուրդների լեզուների հիման վրա:

***

Մառի մահվան 10-ամյա տարեդարձի առթիվ Մոլոտովի անվան պետհամալսարանի Մառի անվան կաբինետը կազմակերպել է նաև Մառի կյանքին ու գործունեությանը նվիրված ցուցահանդես, որտեղ բավականաչափ հաջող ձևով ցուցադրված են մեծ գիտնականի ուսումնասիրությունները՝ բանասիրության, լեզվաբանության, հնաբանության, պատմության և այլ հարցերի մասին, նրա հայագիտական աշխատությունները, Հայաստանում կատարած պեղումների լուսանկարները, կյանքի զանազան դրվագներին լույս սփռող փաստաթղթերը և այլն: